



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

5 մայիսի 2025 թվականի թիվ 48-Ա

ք. Երևան

### «ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի մարտի 31-ի թիվ 01/11.1/2526-2025 գրությունը, «ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության 2025 թվականի ապրիլի 30-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը որոշում է.

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 13-ի թիվ 132-Ա որոշմամբ «ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը Երևան քաղաքում հատկացված 93.2 ՄՀց հաճախականությունը փոխարինել 93.3 ՄՀց հաճախականությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԶԱՐԿ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՒՅԱՆ

2025թ. մայիսի 5  
ք. Երևան